

Գեղարդավանք

Գեղարդի միջնադարյան վանքը գտնվում է Կոտայքի մարզում, Երևան-Գառնի-Գողթ ճանապարհի շարունակության վրա:

Հեռավոր անցյալում կոչվել է Այրիվանք՝ քարայրային կառույցների պատճառով, իսկ XIII դարից վանքում պահված սուրբ գեղարդի պատվին (որով խոցվել էր խաչված Հիսուսը) նաև Գեղարդ: Ըստ ավանդության՝ հիմնադրվել է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու առաջին տարիներին (IV դ. սկիզբ): Գեղարդի վանքը միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային նշանակալի կենտրոններից էր, ուր բացի պաշտամունքային կառույցներից գոյություն ունեին դպրանոց, գրադարան, գրչատուն, բազմաթիվ ժայռափոր խուցեր վանականների բնակության համար:



Պահպանված հնագույն հուշարձանը պարսպապատերից դուրս, արևմտյան կողմում գտնվող կիսով չափ ժայռափոր մատուռն է, որի պատերի վրա փորագրված են XII-XIIIդդ. նվիրաբերական արձանագրություններ: XIIIդ. ստեղծվել է վանքի հիմնական համալիրը, որի մեջ ներառված են գլխավոր եկեղեցին (Կաթողիկե), կից գավիթը, ժայռափոր երկու եկեղեցիներ, ժամատուն-դամբարանը և տարբեր չափերի խուցեր: Այդ ամենը հյուսիսային կողմից երիզված է ուղղաձիգ բարձր ժայռերով, իսկ մնացած կողմերից պարուրված է քարակերտ պարսպապատերով: Ավելի ուշ (XVIIդ.) պարսպին կից կառուցվել են բնակելի և տնտեսական տարբեր շենքեր:

Գլխավոր եկեղեցին, ըստ արևմտյան ճակատի մուտքի վերևի արձանագրության, կառուցվել է 1215թ.-ին, Ջաքարյանների օրոք: Ներսի հարդարանքն ունի XII-XIIIդդ. ճարտարապետական արվեստին բնորոշ մշակում և հարուստ հարդարանք: Կաթողիկեի գավիթը կառուցվել է 1215-25թթ.-ին:



Գեղարդի շինարարական կյանքի երկրորդ, առավել կարևոր շրջանը սկսվել է XIIIդ. կեսերից, երբ Պռոշ իշխանը վանքը Զաքարյաններից գնելուց հետո սկսել է վիմափոր շենքերի կառուցումը: Գլխավոր եկեղեցուն կից, հյուսիսային ժայռի տարբեր բարձրությունների վրա փորվել է վերերկրյա շինությունների արվեստին համարժեք ճարտարապետական կառույցների ամբողջ խումբ՝ ներքևում երկու ոչ մեծ եկեղեցի և մեկ գավիթ, վերևում՝ սյունազարդ ժամատուն-դամբարան: Առաջին եկեղեցին, որը գտնվում է գլխավոր եկեղեցու գավթի հյուսիս-արևմտյան կողմում, ստեղծվել է XIIIդ. երեսնական թվականներից մինչև 1250թ.: Եկեղեցու գմբեթակիր քառակուսու վրա փորագրված է ճարտարապետի անունը՝ Գալձագ: 1283թ.-ին փորվել է ժայռակոփ երկրորդ եկեղեցին և նրա գավիթը. վերջինս, հավանաբար, եղել է Պռոշյանների տոհմական դամբարանը:



Գավթի մուտքի առանցքի ուղղությամբ ստեղծված կամարների մեջ քանդակված է եզան գլուխ, որը պահում է շղթայակապ երկու առյուծների, նրանցից մի փոքր ներքև պատկերված է թևերը պարզած արծիվ՝ ճիրաններում գառ. Պռոշյանների տոհմական զինանշանն է: Երկրորդ եկեղեցին պատկանում է գմբեթավոր դահլիճների տիպին: Ինչպես եկեղեցու, այնպես էլ գավթի պատերը ծածկված են քանդակներով (մարդկային պատկերաքանդակներ, թռչուններ, երկրաչափական և բուսական տարբեր բնույթի հյուսվածքներ): Ժայռի վերին մասում 1288թ.-ին կառուցվել է Պռոշ իշխանի որդի Պապաքի և նրա կին Ռուզուքանի ժամատուն-դամբարանը:

Աշխարհի վիմափոր շինությունների մեջ Գեղարդը գրավում է առանձնակի տեղ: Վանքի շրջապատում կան գեղաքանդակ բազմաթիվ խաչեր և ժայռափոր խուցեր: Որոշ քարայրեր էլ ունեցել են նաև պաշտպանական նշանակության և կոչվել ժողովրդական հերոսների անուններով:

Գեղարդավանքը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-յի ցանկում որպես նյութական համաշխարհային մշակութային ժառանգության արժեք:



Գեղարդավանքի անվան հետ կապված պահպանվել են մի քանի զրույցներ:
Վանական համալիրի կառուցման պաշտոնական տարբերակից զատ գոյություն ունի
ավանդական տեսակետ, որի համաձայն՝ մի ազնվատոհմիկ ընտանիքից քույր և եղբայր
որոշել էին թողնել աշխարհիկ կյանքը և ձորի մեջ տաճար կառուցել: Նրանք խնդրում են
Աստծուն օգնել իրենց: Առավոտյան արթնանալով՝ տեսնում են իրենց բրիչը՝ խրված,
լեռան կատարին և քրտնաջան աշխատանքով՝ եղբայրը իր սրով փորելով, քույրը՝
մազերի հյուսքերով քարերը տեղափոխելով, աստիճանաբար ժայռի մեջ բացում են մի
տաճար, որտեղ էլ հետագայում կնքում են իրենց կյանքի մահկանացուն:



Այլ գրույցներ կապված են Լենկթեմուրի արշավանքների հետ: Լսած լինելով Գեղարդի վանքի հրաշագործությունների համբավը՝ Լենկթեմուրը(1336-1405) որոշում է անձամբ փորձել այն: Հարձակվում է ամայի ձորի վրա և հրամայում բերել իր մոտ Գեղարդի Սուրբ Նշանը: Հենց զինվորները բարձրացնում են նիզակները Սուրբ Նշանին հարվածելու, անմիջապես բյուրավոր աներևույթ զրահավորված զինվորներ գույնզգույն համազգեստներով ամեն կողմից հարձակվում են թշնամու վրա: Իրարանցում է ընկնում Թեմուրի զորքի մեջ. ոմանք փախուստի են դիմում, ուրիշների ձեռքերն են գոսանում, շատերը կուրանում են: Տեսնելով այդ սարսափահար Լենկթեմուրը թողություն է խնդրում Սուրբ Նշանից և, մեծամեծ պարզկներ խոստանալով նրան, ետ է վերադառնում:

Գեղարդի հյուսիսային պատի քարայրային վանքում, մեկ այլ ավանդության համաձայն, թանկարժեք գանձ է պահվել: Իրականում ժամանակի ճարտարապետները, օգտագործելով երդիկից եկեղեցի մտնող լուսային էֆեկտները, կարողացել են լույսին տալ կլորավուն ադամանդի տեսք: Լենկթեմուրը, իմանալով այստեղ պահվող ադամանդի մասին, ցանկանում է վերցնել գանձը, սակայն մոտենալով նրան՝ փակում է լույսի ճանապարհը սեփական ստվերով, ինչի արդյունքում գանձն «անհետանում է»: Հեռանալով՝ նա կրկին տեսնում է գանձը. այդպես նա մոտենում է երեք անգամ: Այնուհետև Լենկթեմուրը որոշում է չավերել վանքը և հեռանում է: 1679 թվականի Գառնու երկրաշարժից հետո քարերի դասավորությունը խարխլվում է, և գանձ-ադամանդն անհետանում է:

